

**ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ  
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

**«ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ» ՍՈՑԻԱԼ-  
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԿՐԹԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ**

# **ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ**

**Խուճապ Հայոց լեզու և գրականություն**

**Թեմա Ուղղագրության և ուղղախոսության ուսուցման**

**Դժվարություններն ու հաղթահարման միջոցները**

**Հետազոտող՝ Գյուլնազ Թովմասյան**

**Սյունիքի մարզի Հարժիսի Համլետ Մինասյանի  
անվան միջնակարգ դպրոց հայոց լեզվի և  
գրականության ուսուցչուհի**

**Դեկավար՝ Նելլի Ղուշունց**

**ԳՈՐԻՍ 2022**

**ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ**

**ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ**

Ներածություն-----3

**Գլուխ առաջին**

1. Հայերենի ուղղագրության հիմնական սկզբունքները-----4

2. Ուղղագրության և ուղղախոսության ուսուցման դժվարություններն ու հաղթահարման միջոցները-----5

3. Ուղղագրության ուսուցման իմ ձևերն ու մեթոդները-----6

4. Վարժությունները որպես ուղղագրական կարողությունների ձևավորման միջոց-----8

Եզրակացություն-----15

Օգտագործված գրականության ցանկ-----16

## Ներածություն

**Թեմայի արդիականությունը:** Ուղղագրությունն ու ուղղախոսությունը սերտ կապված են միմյանց հետ: Ուղղագրություն է կոչվում գրության ընդունված, պարտադիր համարվող կանոնների համակարգը և այդ համակարգն ուսումնասիրող ու բացահայտող գիտությունը: Իբրև գիտաձյուղ՝ հետևում է ուղղագրական կանոնների կիրառմանը, կանխում է ուղղագրական խաթարումները, պաշտպանում է գրությունների միակերպությունը, դյուրացնում է երկգրություն ունեցող բառերի ուղղագրությունը, իսկ ուղղախոսությունը ուղիղ կամ ճիշտ խոսելու, գրվածը ճիշտ կարդալու կանոնների ամբողջություն է: Իբրև լեզվաբանական գիտաձյուղ՝ զբաղվում է ուղղախոսական կանոնների ուսումնասիրությամբ, որոշում է արտասանական տարբերակներից ճիշտն ու ընդունելին, մերժում է սխալն ու անընդունելին՝ ցույց տալով նրա դերն ու նշանակությունը գրական լեզվի զարգացման գործում:

Ուղղագրությունը եղել և մնում է լեզվի ուսուցման ամենադժվար բաժիններից մեկը: Դժվարություն է հարուցում հատկապես այն, որ նյութի յուրացումը հենվում է հիմնականում մեխանիկական հիշողության վրա, և սովորողները հաճախ չեն գիտակցում ուղղագրական կանոնների և դրանց հիմքում ընկած լեզվական իրողությունների փոխադարձ կապը, որի հետևանքով էլ չեն ըմբռնում ուղղագրության սկզբունքներն ու օրինաչափությունները:

### Ուսումնասիրության նպատակը:

Սովորողների մոտ զարգացնել հայերենի ուղղագրության և ուղղախոսության կանոններին տիրապետելու, ճիշտ գրելու և ճիշտ խոսելու կարողություններ և հմտություններ:

### Ուսումնասիրության խնդիրներն են՝

1. ուսումնասիրել ուղղագրության ուսուցման սկզբունքներն ու մեթոդները և ուղղագրական կարողությունների ձևավորման գործընթացը.
2. ուսումնասիրել հետաքրքրաշարժ վարժությունների դերը բաղաձայնների ուղղագրության ուսուցման գործընթացում:
3. մշակել և փորձարկել հետաքրքրաշարժ վարժություններ և դրանց կիրառմանը միտված մեթոդական ցուցումներ:
4. **Ուսումնառության արդյունքը:** Կիրառել ուղղագրական կանոնները գրավոր խոսքում, տիրապետել հայերենի ուղղախոսության կանոնների ամբողջությանը բանավոր խոսքում:

## 1. Ուղղագրության հիմնական սկզբունքները:

Ուղղագրության ուսուցման արդյունավետությունը նկատելիորեն բարձրանում է, երբ նյութի բաշխումը և մատուցման մեթոդիկան հիմնվում են ուղղագրական սկզբունքների և օրինաչափությունների վրա՝ ստեղծելով կապ ուղղագրական կանոնի և դրա հիմքում ընկած լեզվական իրողության միջև: Ուղղագրական դժվարություն են հարուցում հատկապես այն հնչյունները, որոնք միշտ չէ, որ գրվում են այնպես, ինչպես արտասանվում են: Անկախ դրանից թե՛ ձայնավորները, թե՛ բաղաձայնները ունեն իրենց ուղղագրական կանոնները, որոնք որոշվում են **հնչյունական, ձևայնաբանական և ավանդական սկզբունքներով**: Ըստ հնչյունական սկզբունքի՝ բառերը գրվում են այնպես, ինչպես արտասանվում են, և ուղղագրությունն այդ դեպքում հիմնվում է բառի հնչյոթային վերլուծության վրա: Հայերենի ուղղագրությունը հիմնականում հնչյունական է. բառերի մեծ մասի գրությունը համապատասխանում է արտասանությանը: Աշակերտները քիչ սխալներ են անում այս սկզբունքով գրվող բառերում, եղածներն էլ հնչյոթային սխալ վերլուծությունների, ուղղախոսական կանոնների չիմացության հետևանք են, որոնք վերացնելուց հետո հեշտությամբ կանխվում են: Հնչյունական կամ ավանդական ուղղագրության դեպքում հաճախ հնարավոր չէ խուսափել ստուգաբանական սկզբունքից և գրության ժամանակ հաշվի է առնվում բառի ծագումն ու նրա նախնական կազմումը:

Լեզվում կան մի շարք բառեր, որոնց ուղղագրությունը հիմնվում է ձևայնաբանական սկզբունքի վրա, ըստ որի՝ յուրաքանչյուր ձևայն պետք է ունենա կայուն գրածն, որը կպահպանվի հնչյունափոխությունների ժամանակ: Հայերենում գրության և արտասանության անհամապատասխանությունը վերաբերում է միայն բաղաձայններին: Հայերենում ավանդական գրություն ունեն ձայնեղ բաղաձայնները, որոնք մի շարք բառերում ձայնավորից, **ր-ից, մ և ն** ձայնորդներից հետո ունեն շնչեղ խուլ արտասանություն:

## 2. Ուղղագրության և ուղղախոսության ուսուցման դժվարություններն ու հաղթահարման միջոցները

Դպրոցում լեզվի ուսուցումը կատարվում է երկու ճանապարհով՝ բանավոր և գրավոր: Գրավոր խոսքի ուսուցումն անհամեմատ ավելի դժվար է, քան բանավոր խոսքի ուսուցումը: Այդ իսկ պատճառով հայոց լեզվի ուսուցչից պահանջվում է մանակրկիտ աշխատանք, այլապես հնարավոր չի լինի հաղթահարել գրավոր խոսքի դժվարությունները, առանձնապես նրա ուղղագրական դժվարությունները: Ուսուցման ընթացքում ուսուցչի խնդիրն է՝ անթերի ուսուցանել ուղղագրական խնդիրները, աշակերտների մեջ մշակել գիտելիքների կիրառման ունակություններ և հմտություններ: Դպրոցներում պետք է ծավալել ուղղախոսության համար միասնական պայքար, որովհետև հաճախ չի պահպանվում գրական արտասանությունը, նկատելի են բարբառային արտահայտություններ: Ուղղագրության ուսուցմանը բացասաբար է անդրադառնում նաև ուղղագրական կանոնների չիմանալը, առանց որի հնարավոր չէ աշակերտներին ճիշտ գրել սովորեցնել: Ուսուցանելով ուղղագրական այս կամ այն կանոնը՝ ուսուցիչը իր գործը դրանով ավարտված չպետք է համարի, ինչպես լինում է շատ հաճախ, այլ պետք է ուսուցանածը անընդհատ կրկնի, միշտ թարմ պահի աշակերտների հիշողության մեջ և հասնի այն բանին, որ աշակերտները կարողանան գրավոր խոսքի ժամանակ ճիշտ օգտագործել ուղղագրական կանոնները: Անցած ուղղագրական կանոնը աշակերտների հիշողության մեջ ամրապնդելու լավագույն միջոցներից են՝

ուսուցողական գրավորները, հատկապես թելադրությունները,

զանազան տիպի ուղղագրական վարժությունները,

քարտային աշխատանքները,

խաղ-վարժությունները,

ուղղագրական վերլուծությունները:

Բառի սխալ ստուգաբանումը, իմաստի ճիշտ չհասկանալը նույնպես խոչընդոտում են ուղղագրության ուսուցմանը: Այսպես՝ աշակերտները հաճախ շփոթում են **հնչուն-հնչյուն, թույր-թյուր, անոթ-անոթ, թոթվել-թոթովել, կտրիճ-կտրիչ, վաղորդայն-վաղորդյան** և նման այլ բառեր:

Երբեմն ուսուցիչը սխալների տիպավորումը ճիշտ չի կատարում, ինչն էլ նպաստում է ուղղագրության ուսուցմանը: Վերջինս պահանջում է նախ մշակել որոշ արդյունավետ միջոցներ, նոր կիրառել ուսուցման ընթացքում՝ հաշվի առնելով աշակերտների կարողությունները, նրանց կողմից թույլ տրված սխալների տեսակը և ապա դրանց միջոցով կանխել ուղղագրական սխալները: Այս գործում մեծ նշանակություն ունի ուսուցչի գիտամանկավարժական կարողությունը: Ուղղագրության ուսուցման դժվարությունների

հաղթահարումը պայմանավորված է զանազան դիդակտիկ նյութերով, ծրագրերով, գործնական աշխատանքներով: Ամենից առաջ պետք է առանձնակի ուշադրություն դարձնել բառերի ճիշտ արտասանության, հնչյունների ճիշտ արտաբերման վրա, որովհետև գրական լեզվով խոսող աշակերտներին հայերենի ուղղագրությունը սովորեցնելը շատ հեշտ է , իսկ բարբառախոս աշակերտներին սովորեցնելը չափազանց դժվար: Պատճառը հասկանալի է, քանի որ գրական լեզվի արտասանությունն ու գրությունը մեծ մասամբ համապատասխանում են միմյանց: Բարբառախոս աշակերտին գրական լեզվով ճիշտ խոսել սովորեցնել, նշանակում է, նախ գրական լեզվով ճիշտ խոսել սովորեցնել:

Փորձով հիմնավորված է, որ ուշիմ աշակերտը քանի դեռ այս կամ այն բառի բոլոր հնչյունները չի արտասանում, նա չի կարող այդ բառը գրել: Արտասանական հմտությունների մշակումը պահանջում է երկարատև, ուշադիր և հետևողական աշխատանք: Պետք է ստեղծել այնպիսի մթնոլորտ, որ ոչ մի սխալ արտասանություն չվրիպի աշակերտների ուշադրությունից, որ սխալը լսելիս աշակերտներն անմիջապես ուղղեն: Սակայն ընթերցանությունը անփոխարինելի միջոց չէ բառերի ուղղագրությունը յուրացնելու համար, քանի որ հաճախ ընթերցողը կարդալիս արագ անցնում է և չի նկատում սխալները: Նշանակում է՝ ընթերցանությունը ուղղագրություն սովորեցնելու միայն օժանդակ միջոցն է, բայց ոչ՝ հիմնական: Ուղղագրության ուսուցման կարևորագույն խնդիրը եղել և մնում է սխալի կանխումը: Հետևապես դասավանդման պրոցեսում առաջնային խնդիր ենք համարում վաղօրոք կանխել աշակերտների կողմից թույլ տրվող սխալները՝ կիրառելով ուղղագրության ուսուցման տարբերակված մեթոդը:

### **3.Ուղղագրության ուսուցման իմ ձևերն ու մեթոդները**

Այսպես՝ յ ձայնակապի ուղղագրությունը բացատրելիս ասում են, որ հայերենում կից ձայնավորների միջև լսվում է յ ձայնակապ, բայց գրվում է միայն ա-ից և ո-ից հետո, ինչպես նաև մի քանի օտար բառերում, օրինակ՝ Ալեքսեյ, Սերգեյ, հոբեյ, լիցեյ: Ջգուշացնում են, որ մտապահեն այս կանոնը և կից ձայնավորների միջև յ չգրեն, եթե նրանցից առաջինը **ե, է, ի** կամ **ու** ձայնավոր է: Բերում են օրինակներ, բացատրում և գրում գրատախտակին՝ **տիեզերք, լինեի, գրեինք, էական, էապես, էիր, միասին, բարիանալ, ձիով, թիակ, վերարկուով, Չիբուխլուի** և նման բառեր: Ապա ցուցադրում են նախապես կազմված հետևյալ աղյուսակը՝

արքայություն, նայել	երեկոյան, գոյություն
Միքայել, գնայի, խաղայի	հաճոյանալ, Կարոյի
կաթսայատուն, Իսրայել	կինոյի, շոյել

Նոր նյութը բացատրելիս աշխատում են՝ որքան հնարավոր է աշակերտներին զերծ պահել սխալից, նրանց մեջ ստեղծել սխալը ինքնուրույնաբար կանխելու ձգտում: Ուղղագրական այս կամ այն իրողության վերաբերյալ կանոնը երբեք պատրաստի

ձևակերպամբ չեն հաղորդում աշակերտներին: Ստեղծում են այնպիսի իրադրություն, որ աշակերտները կարողանան ինքնուրույն, սեփական դիտարկումով մասնակցել դասին: Ժամանակակից արևելահայերենում ուղղագրական դժվարություններն ավելի շատ առնչվում են բաղաձայնների գրությանը, քանի որ վեց ձայնավորներից երեքը՝ **ա,ի,ու**, գրության և արտասանության տարբերություններ չունեն, իսկ մյուս երեքի՝ **է,ը,օ** գրության և արտասանության տարբերությունները համակարգային են, ընդհանուր սկզբունքով որոշված, այլ ոչ թե առանձին-առանձին վերաբերում են տարբեր բառերի:

### Բաղաձայնական համակարգ

ԵՌԱՇԱՐՔ			ԵՐԿՇԱՐՔ		ՄԻԱՇԱՐՔ
ՁԱՅՆԵՂ	ԽՈՒԼ	ՇՆՉԵՂ ԽՈՒԼ	ՁԱՅՆԵՂ	ԽՈՒԼ	ՁԱՅՆՈՐԴ
Բ	Պ	Փ	Զ	Ս	Լ
Գ	Կ	Ք	Ժ	Շ	Մ
Դ	Տ	Թ	Ղ	Խ	Ն
Զ	Ծ	Ց	Կ	Ֆ	Ր
Զ	Ճ	Չ			Ռ
					Յ
ՀԱԳԱԳԱՅԻՆ				Հ	

## ԲԱՂԱՁԱՅՆՆԵՐԻ ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆԸ

ՊԱՐՁ	բ, գ, դ, զ, ժ, լ, խ, կ, հ, ղ, մ, յ, ն, շ, պ, ռ, ս, վ, տ, ռ, ֆ
ԲԱՐԴ	ջ, ճ, չ, ծ, ժ, ց $\delta > \eta + q$ , $\varrho > \eta + \sigma$ , $\sigma > \eta + u$ , $g > \rho + u$ , $\delta > \eta + \zeta$ , $\xi > \rho + \zeta$ .

### Վարժությունները որպես ուղղագրական կարողությունների ձևավորման միջոց

Հայերենում գրության և արտասանության տարբերություններ նկատելի են **բ-պ-փ, գ-կ-ք, դ-տ-թ, ծ-ժ-ց, ջ-ճ-չ, ղ-խ, վ-ֆ, ռ-ռ, հ** հնչյունների, ինչպես նաև **կրկնակ բաղաձայնների** գրության և արտասանության դեպքում, ուստի ստորև կներկայացնեմ դրանց ուսուցման իմ փորձը: Գրատախտակին գրում ենք նոր դասի վերնագիրը՝ **բ-պ-փ-ի ուղղագրությունը և ուղղախոսությունը**: Նախ աշակերտներին հարցնում եմ, թե ինչ գիտեն դասի վերաբերյալ: Սկսում են բառեր թվարկել: Այն բառերը, որոնք գրությամբ և արտասանությամբ դժվարություն են ներկայացնում, գրում ենք գրատախտակին՝ **դարբին, Գաբրիել, որբ, համբույր, սրբել** և այլն: Օրինակների հիման վրա բացատրում եմ կանոնը, որ մի շարք դեպքերում բառամիջում և բառավերջում **բ** է գրվում, սակայն **փ** է արտասանվում՝ **ր-ից, մ-ից, ձայնավորից** հետո: Այնուհետև ինքս թելադրում եմ հետևյալ բառերը՝ **աղբ, աղբյուր, եղբայր, որբ** և պահանջում, որ դրանցով կազմեն նոր բառեր և ընդգծեն արմատները:

Օրինակ՝

**Աղբ-աղբարկղ**

**Աղբյուր- աղբյուրաջուր**

**Եղբայր-եղբայրասեր**

**Ողբ-ողբաձայն**

Աշխատանքը կատարելուց հետո՝ աշակերտները եզրակացնում են, որ նշված բառերի **ղբ** տառերը արտասանվում են **խա՛** համոզվելով, որ գրությունն ու



արտասանությունը չեն համապատասխանում: Նման մեթոդով դասը բացատրելը աշակերտներին հնարավորություն է տալիս ամրապնդելու սովորած ուղղագրական գիտելիքները և ունենալու դրանք կիրառելու կարողություններ: Աշակերտների ուղղագրական գիտելիքների հարստացման ու ամրապնդման, խոսքի զարգացման գործում կարևոր է նաև բառերի իմաստային վերլուծությունները և դրանք նախադասության մեջ գործածելը: Շփոթության տեղիք է տալիս հետևյալ բառերի գրությունը՝ **շտաբ-շտապ, արբել-արփի**: Բացատրում ենք բառերի իմաստը՝

**շտապ**-փութկոտ, հապճեպ, անհապաղ, հապշտապ, իսկույն

**շտաբ**-գորամասերում, զորամիավորներում զորքերի ղեկավարման մարմին

**արբել**-հարբել, արբենալ, հագենալ

**արփի**-արեգակ, արև, այնուհետև կիրառում նախադասությունների մեջ, օրինակ՝

**Շտաբի աշխատանքը ղեկավարում է շտաբի պետը:**

**Նա շտապ դուրս եկավ տնից և այլևս չվերադարձավ:**

**Մենք հրճվում էինք և արբում էինք մեր կյանքի բացվող առավոտով:**

**Ահա լավարի վիթխարի ուսին բազմում է արփին թարմացած ուժով:**

Աշակերտների ձեռք բերած գիտելիքները ստուգելու համար կարևորում են՝

ա) քարտերի օգտագործումը, որը ինքնուրույն աշխատանքի կազմակերպման լավագույն եղանակն է, հնարավորություն է տալիս աշակերտների նկատմամբ անհատական մոտեցում ցուցաբերելու համար,

բ) ինչպես նաև բառային թելադրությունները:

Բառի իմաստի բացատրությունը, դրանք խոսքի մեջ կիրառելը նպաստում են աշակերտների ոչ միայն ուղղագրական գիտելիքների զարգացմանը, այլև բառապաշարի հարստացմանը:

Ուղղագրության ուսուցման արդյունավետ հնարներից է նաև բառի կազմության ուսումնասիրությունը:

**Գ-կ-ք** բաղաձայնների ուղղագրությունը և ուղղախոսությունը անցնելիս կազմում են հետևյալ բառերի ցուցակը, որոնք գրությամբ կամ արտասանությամբ գրեթե նման կամ մոտ են, բայց իմաստով տարբեր:

**Բարակ-բարաք, գիրկ-գիրգ-գիրք, երգ-երկ, երեկ-երեք, կարգին- կարկին, հարկ-հարգ, հերկել –հերքել, մեզ –մեկ, մուգ-մուկ, մեղկ-մեղք, վանկ-վանք, վարկ-վարք-վարգ, ցանկ-ցանք,գինարբուկ-գինարբուք:**

Այն բառերը, որոնք աշակերտներին անծանոթ են, բացատրում են, մեկնաբանում: Շատ հաճախ **վարկաբեկել** բառի **վարկ** արմատը աշակերտները շփոթում են **վարք** բառի հետ: Նման դեպքում անհարաժեշտ է բացատրել բառի կազմությունը՝ **վարկ-ը** նշանակում է հեղինակություն, հարգանք, պատիվ, իսկ **բեկել**՝զցել, շեղել, կտորել, իսկ **վարքագիծ** բառում **վարք-ը** նշանակում է վարվեցողություն, գործելակերպ, վարվելաձև: Ուշադրություն են դարձնում **չաղգամ** բառի կազմությանը, գրությանն ու արտասանությանը: Ճիշտ է՝ արտասանվում է **խկ**, բայց գրվում է **ղգ**: Գրատախտակին գրում ենք բառեր, որոնց գրությունն ու արտասանությունը տարբեր են՝ **երգ, պարգև, զուգել, օգնել, անգամ , ծիգ** և այլն՝ տալով կանոնի սահմանումը, որ նշված բառերում **ր-ից, ձայնավորից, ն-ից** հետո գրվում է **գ**, բայց արտասանվում է **ք**:

**Դ-տ-թ** բաղաձայնների ուղղագրությունը և ուղղախոսությունը բացատրելիս նույնպես կազմում են բառախմբեր՝ **այդ-այտ, անող-անօղ-անոթ-անոտ, բրդել-բրթել, գդալ-գթալ, խորդ-խորթ, մարդ-մարտ-մարտ, մարդիկ-մարտիկ, որդ-որթ,Նվարդ-Չվարթ-զվարթ,վաղորդյան-վաղորդայն,սպրդել-սփրթնել,հարթ-հարդ,հորդ-հորթ,փտել-փթթել,խայտալ-խայթել,բութ-բութ-բուտ,գիրթ-կիրթ**: Աշակերտների օգնությամբ բառերի իմաստները բացատրելով՝ դրանք կիրառում ենք նախադասությունների մեջ: **Օրինակ՝** Այս խաղողի **որթը** ես եմ խնամում: Հնում կարմիր ներկ ստացել են **որդերից**: Պահանջում են բառատետրում գրեն և սովորեն:

Քանի որ **տ-ն և թ-ն** բառի բոլոր դիրքերում գրվում են այնպես,ինչպես արտասանվում են,ուստի աշակերտների օգնությամբ բերում և գրում ենք այնպիսի բառեր,

1. որոնց մեջ **ր-ից** հետո **թ** է լսվում,սակայն դ գրվում՝ **կարդալ, Տրդատ,վարդ,որդ,արդար** ,ինչպես նաև **-որդ,-ուրդ** ածանցներով բառերում **հաջորդ,ժողովուրդ,խորհուրդ,նախորդ,**
2. ձայնավորից հետո՝ **դադար, օդ,դրում**
3. **ն-ից** հետո՝ **խնդիր, կենդանի**:

Կարևոր է նաև անդրադառնալ **խեղդել և տաքդեղ** բառերի գրությանն ու արտասանությանը՝ նշելով, որ չնայած **խտ** տառակապակցությունն է լսվում, բայց **խեղդ+ել** բառում **ղդ** կապակցությունն է, իսկ **տաք+դեղ** բառում՝ **քդ**:

Նյութը ամրապնդելու նպատակով հանձնարարում են կազմել բառակապակցություններ դասի վերաբերյալ և կիրառել նախադասությունների մեջ: **Օրինակ՝արդար մարդ, բարդ արդյունք,կարդացող որդի,քանդակագարդ բերդ** և այլն:

**Ձ-ժ-ց** բաղաձայնների գրության և արտասանության տարբերություններ նկատելի են այն բառերում, երբ բառամիջում կամ բառավերջում գրվում է **ժ**, բայց **ց** է արտասանվում: Գրատախտակը բաժանում են երեք սյունակի: Թելադրում են բառեր՝ հանձնարարելով աշակերտներին յուրաքանչյուր սյունակի դիմաց գրել համապատասխան կանոնին վերաբերող բառերը:

Ռ-ից հետո	ձայնավորից հետո	դ-ից հետո
արձակ	օձ	դեղձ
դարձ	օձամանուկ	դաղձ
հանդերձարան	օձածուկ	դեղձան
փորձել	օձագալար	դեղձանիկ

Այսպիսի աշխատանքը ոգևորում է աշակերտներին, նրանք մեծ հետաքրքրությամբ են կատարում, ինչն էլ նպաստում է դասի յուրացմանը: Կամ հանձնարարում են ասել այնպիսի նախադասություն, որի մեջ լինի դասին վերաբերող, բայց դժվարություն ներկայացնող բառ: Օրինակ՝ **Օձի** կծածը կլավնա, լեզվի կծածը չի լավանա:

Մեր դասարանի **Համբարձումը փորձառու** ըմբռանարտիկ է:

Մեկ այլ աշակերտ ընդգծում է այդ բառերը՝ տալով կանոնի սահմանումը:

**Ջ-Ճ-ջ** բաղաձայնների գրության և արտասանության մեջ դժվարություն է ներկայացնում ջ հնչյունը, որովհետև մի շարք արմատներում և նրանցից կազմված բառերում **ր-ից, դ-ից** կամ **ձայնավորից** հետո արտասանվում է **ջ** հնչյունը՝ **արջ, վերջ, աղջիկ, գոջալ, ոջիլ, իջնել** և այլն: Որպեսզի դասը ամբողջությամբ ընկալվի աշակերտների կողմից, ներկայացնում են հետևյալ բառախմբերը՝ անդրադառնալով և՛ բառի կազմությանը, և՛ իմաստի մեկնաբանմանը: Օրինակ՝ **թրջել - թռչել**  
**վարչական- վերջնական**

**մինչև - միջև**

**այջրանք- պճնանք**

**կտրիճ-կտրիջ**

**գոջալ- գեղչել**

**Ղ- խ-ի** ուղղագրության առանձին կանոններ չկան, ուղղակի պետք է հիշել մի շարք բառերի ճիշտ ձևերը: Աշակերտներին շփոթության տեղիք են տալիս **աղտ-ախտ** և **ուղտ-ուխտ** բառերը, քանի որ **խ-ով** են արտասանվում: Բացատրում են հետևյալ բառերի իմաստները՝

**Աղտ-կեղտ, ախտ- հիվանդություն, ուղտ- կենդանի, ուխտ-դաշինք, երդում:**

Հանձնարարում են տրված բառերով թվել նոր բառեր, որոնց մեջ դրանք նույն արմատն ունենան և գրել: Օրինակ՝

**աղտ-** աղտոտ, աղտոտել

**ախտ-** ախտածին, ախտանիշ, ախտորոշիչ, ախտածին

**ուղտ-** ուղտապան, ուղտաբեռ, ընծուղտ, ուղտափուշ

**ուխտ-** ուխտագնաց, ուխտադրուժ

Ուխտը չպետք է շփոթել դուխտի հետ. **դուխտ** նշանակում է **դուստր, օրինակ՝**  
**Խոսրովիդուխտ, Որմիգդուխտ, Հայկանդուխտ:**

**Վ-Ֆ** բաղաձայնների գրությունն ու արտասանությունը իրար համապատասխանում են. Աշակերտների ուշադրությունը սևեռում են հատկապես **հարավ, ավտո, նավթ** և դրանցից կազմված բառերի վրա՝ **հարավային, ավտոմատ, նավթատար**, քանի որ նշված բառերում լսվող **ֆ** հնչյունը գրվում է **վ** տառով:

Դասը ամրապնդելու նպատակով կատարում ենք դասագրքի վարժություններից, ինչպես նաև կատարում ենք քարտային աշխատանքներ:

Որպես կանոն՝ հայերենում **ր-ռ-ի** գրությունն ու արտասանությունը համապատասխանում են իրար: Սակայն կան գրության դեպքեր, որտեղ

1. Ռ-ով վերջացող միավանկ արմատի կրկնությամբ կազմված բառերի մեջ առաջին արմատի **ռ**-ն փոխվում է **ր**-ի, օրինակ՝ **բարբառ, գրգիռ, կարկառ, մրմուռ, սարսուռ** և այլն:

2. Ր-ով վերջացող արմատի կրկնությամբ կազմված բառերում **ր**-ն **ռ**-ի չի փոխվում, օրինակ՝ **թրթուր, երերալ, փրփուր, քրքրել, մարմար** և այլն:

3. Նմանաձայնությամբ կազմված բառերը գրվում են **ռ**-ով՝ արմատի կրկնությամբ կամ **ռ**-ի կրկնությամբ, օրինակ՝ **գոռգոռալ, կռկռալ, ճռճռալ, ճռռալ, մռմռալ, մռռալ, խռխռալ, խռռալ** և այլն:

Գրատախտակին գրում են բառախմբեր, աշակերտներին հանձնարարում են տարբերել դրանց իմաստն ու գրությունը: Նման աշխատանքները նույնպես նպաստում են դասի յուրացմանը: Օրինակ՝

**Առու-արու, բառ-բար, կռունկ-կրունկ, սեռ-սեր, վառ-վար, թռչել-թրջել, կառք-կարգ, թրթիռ-թրթուր, գրգիռ-գռգռալ, մրմուռ-մռմռալ** և այլն:

Հ բաղաձայնի ուղղագրությունն ու ուղղախոսությունը: Նախ դիմում են աշակերտների օգնությանը՝ ինչ գիտեն դասի վերաբերյալ: Թվարկում են մի շարք բառեր, որոնց մեջ **հ** հնչյուն կա: Օրինակ՝ **ագահ, զոհ, նիհիել, արիեստ, սահման** և այլն: Գալիս ենք այն հետևության, որ թվարկված բառերում **հ**-ն և՛ արտասանվում է, և՛ գրվում, սակայն կան բառեր

1. որոնց մեջ **ր-ից** հետո գրվող **հ-ն** չի արտասանվում՝ **աշխարհ, խոնարհ, ճանապարհ, շնորհ, խորհուրդ**
2. **հ-ն** չի հնչվում և չի գրվում **նշխար, ապաշխարել, ընդառաջ, ընդամենը** և այլն,
3. **Արհամարհել, Հովհաննես** բառերում երկրորդ **հ-ն** չի արտասանվում ,բայց գրվում է:
4. Երկրորդ **հ** չի հնչվում և չի գրվում **անհողողող, հայթայթել, հեկեկալ, հեղեղատ, հեղեղել, անհեթեթ** բառերում:

Ուշադրություն ենք դարձնում **աշխարհայացք** բառի կազմությանը՝ նշելով, որ եղել է **աշխարհ+ա+հայացք**, կրկնվող **հա-ն** կրճատվել է, իսկ **հ-ն** արտասանվում է, քանի որ **հայացք** բառի **հ-ն** է:

Կազմում ենք նախադասություններ՝ գործածելով նշված բառերը:

Հայերենում կան բառեր, որոնք գրվում են **կրկնակ բաղաձայնով**: Նման բառերը բաժանում ենք մի քանի խմբերի.

1. նմանաձայնություններ և դրանցից կազմված բառեր , **ինչպես՝ դռալ, բզզալ, ֆշշալ, տզզալ, թշշալ** և այլն:

2. հնչյունափոխության հետևանքով առաջացած բառեր ու բառաձևեր, օրինակ՝ **զննել-զնին+ել (հ-ն սղվել է), մրրիկ- մրուր+իկ (ու-ն սղվել է), ուղղական- ուղիղ+ական (ի-ն սղվել է), փթթել- փթիթ+ել (ի-ն սղվել է), օրրան- օրոր+ան (ո-ն սղվել է)** և այլն:

3. բառակազմական կամ քերականական տարբեր բաղադրիչների միացումով առաջացած բառեր, օրինակ՝ **այբբենարան <այբ+բեն+արան, երեստրիչ <երես+տրիչ** և այլն:

4. ն-ով վերջացող բազմական բառերի հոգնակի թվի ձևեր, օրինակ՝ **բաղաձայններ, սողուններ, սեղաններ, թռչուններ** և այլն:

5. ն-ով սկսվող արմատներից **ան-** նախածանցով կազմված բառեր՝ **աննման, աններելի, աննախադեպ, աննպատակ** :

6. **ինը (ինն)** թվականից կազմված բառեր՝ **իննական, իննամյա, քսանիննամյա** և այլն:

7. մի շարք փոխառյալ բառեր և օտար անուններ, օրինակ՝ **Աննա, Աքիլես, Էմմա, տոննա, ֆինն , Վիեննա, ժաննա, Մեքքա, բալլադ** և այլն:

Ունենք բառեր , որոնք իրենց գրությանը ստեղծում են կրկնակ բաղաձայնի տպավորություն: Այդ բառերը չպետք է շփոթել կրկնակ բաղաձայնով բառերի հետ, որոնց գրության մեջ իրար հաջորդող նույն տառերի միջև արտասանվում է գաղտնավանկի **ը**, օրինակ՝ **կկու-կրկու, դդում-դըդում, խխունջ-խըխունջ, շշուկ-շըշուկ** և այլն:

Աշակերտների ուղղագրական և ուղղախոսական հմտությունների ձևավորման ու զարգացման գործում մեծ դեր ունի ուղղագրական բառարանը, որը ուղղագրական և ուղղախոսական դժվարությունները հաղթահարելու կարևորագույն միջոցներից է:

Ուղղագրական բառարանի կարիքն ավելի շատ զգում են հինգերորդ դասարանցիները, որովհետև նրանց ուղղագրական գիտելիքները դեռ շատ աղքատիկ են: Բառարանից օգտվելու համար աշակերտները պետք է լավ իմանան այբուբենը, որպեսզի կարողանան որոշել տառերի հաջորդականությունը:



Բառարանով աշխատանքը չի բացառում աշակերտների կազմած բառատետրերի գործածումը: Բառատետրում աշակերտը գրում է այն բառերը, որոնք ուղղագրական դժվարություն են ներկայացնում:

## Եզրակացություն

Ինչպես նկատեցինք, լեզվի ուղղագրության և ուղղախոսության ուսուցման ընթացքում առաջ են գալիս մի շարք դժվարություններ, որոնք պետք է հաղթահարվեն: Օրինակ՝

1. Առկա են բառի ոչ ճիշտ արտասանություն, կան գրական և բարբառային արտասանական տարբերություններ:
2. Կա հնչման և գրության տարբերություն:
3. Ուղղագրական կանոնը չիմանալը:
4. Բառի սխալ ստուգաբանում:
5. Դասավանդման ոչ ճիշտ մեթոդների առկայություն, սխալը կանխելու նպատակով աշխատանքի բացակայություն:
6. Ուղղագրական սխալների առկայություն գրականության մեջ:

Նկատի ունենալով այս դժվարությունները՝ հինգերորդ դասարանում ուղղագրության և ուղղախոսության ընթացքում օգտագործում ենք մի շարք մեթոդական հնարներ, ուսուցման ձևեր, որոնք նպաստում են ուսուցման դժվարությանը: Գործածում ենք՝

1. ուղղագրական բառարան, աշակերտական բառատետր,
2. կատարում ենք ուղղախոսական վարժություններ, պահպանում ենք ուղղախոսական նորմաները,
3. կանխում ենք սխալները, բացատրում ենք բառիմաստը, գործածում ենք նախադասությունների մեջ,
4. ուղղագրական քարտերի օգտագործում, աշակերտների ինքնուրույնության զարգացում կանոնը օրինակներից բխեցնելու, գծակարգեր կազմելու միջոցով:

Ուղղագրության և ուղղախոսության ուսուցման ձևերն ու եղանակները բազմազան են ու անսպառ: Երբեմն դուրս ենք գալիս դասագրքի սահմաններից, պրպտում, գտնում ենք դասավանդման նոր ձևեր՝ դրանց հիման վրա կառուցելով դասավանդման մեր փորձը:

## Օգտագործված գրականություն

1. Ա.Ս. Մարգարյան- «Ժամանակակից հայոց լեզու», Երևան, 1997
2. Յու. Ավետիսյան, Հ. Զաքարյան- «Հնչյունաբանություն, ուղղախոսություն, ուղղագրություն», Երևան, 2008
3. Դ. Գյուրջինյան, Թ. Ալեքսանյան, Ա. Գալստյան- «Մայրենի, հանրակրթական դպրոցի 5-րդ դասարանի դասագիրք»